

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՄՇՏԱԴԵՍ ՀԱՆԳՐՎԱՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Posted on August 18, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Մուսուլից Փախստական 65 Հայ Ընտանիքներ

Համո Մուսկոֆեան, Պեյրուբ, 11 Օգոստոս 2014

Իրաքում և Իրաքյան Քուրդստանում տեղի ունեցող ահավոր իրադարձությունները, հալածանքներն ու կոտորածները, եղեռնագործությունները Արևմուտքի երբեմնի “ձեռնասուն”, Իսլամական ծայրահեղական «ԴԱՀԷՇ»ի կողմից` ցնցել է աշխարհը:



Անցյալ տարի թե 2014 թ.ին, բազմիցս լինելով Երբիլում, Դիոկում, Չախոյում, հայկական Ավգրուկ և Հավրեզ ավաններում, հիացել էի այն մեծ հարգանքից ու պատվից, որոնք վայելում են հայկական ծաղկուն գաղթօջախի որդիներն ու դուստրերը, Իրաքի Խորհրդարանի պատգամավոր, «Փեշմերկա» Արամ Շահին Բակոյանը և նշանավոր ճարտարապետ Երվանդ Ամիսյանը:

Մուսուլից Փախստական 65 Հայ Ընտանիքներ

Համո Մուսկոֆեան, Պեյրուբ, 11 Օգոստոս 2014

Իրաքում և Իրաքյան Քուրդստանում տեղի ունեցող ահավոր իրադարձությունները, հալածանքներն ու կոտորածները, եղեռնագործությունները Արևմուտքի երբեմնի “ձեռնասուն”, Իսլամական ծայրահեղական «ԴԱՀԷՇ»ի կողմից` ցնցել է աշխարհը:



Անցյալ տարի թե 2014 թ.ին, բազմիցս լինելով Երբիլում, Դիոկում, Չախոյում, հայկական Ավգրուկ և Հավրեզ ավաններում, հիացել էի այն մեծ հարգանքից ու պատվից, որոնք վայելում են հայկական ծաղկուն գաղթօջախի որդիներն ու դուստրերը, Իրաքի Խորհրդարանի պատգամավոր, «Փեշմերկա» Արամ Շահին Բակոյանը և նշանավոր ճարտարապետ Երվանդ Ամիսյանը:

Արբանյակային հեռարձակմամբ, եռալեզու «Իշտար» հեռուստաընկերության տնօրեն Ռազմիկ Մուրադյանը, Երբիլի հայոց կառուցվող փառավոր եկեղեցվո և հայ գաղթօջախի ղեկավար Շանթ Մուրադյանը` պատմում էին թե ինչպես` նախագահ Մեսուդ Բարզանին, 5 միլիոն դոլար է նվիրել, որպեսզի Իրաքից փախստական հայերը ունենան իրենց հոգևոր տաճարը և տունը մայրաքաղաք Երբիլում: Ամենուրեք տեսնում էինք նախկին փոխ-վարչապետ և տնտեսության նախարար Սարգիս Աղաճանի կառուցած հրաշալի ավաններն ու գյուղերը, հայերի և քրիստոնյաների, եգիպտացիների և քրդերի համար:

Մեր վերջին հանդիպմանը սակայն, Մուսուլի հայ եկեղեցվո հոգևոր հովիվ, Իրաքյան բանակի նախկին բժշկական սպա Տեր Առաքել Գասբարյանի հետ, տխուր խոհերի մեջ թողեց բոլորիս: «ԴԱՀԷՇ»ական գազանները հարձակվել էին (ինչպես 1915-ին...), հայերի և քրիստոնյաների թաղամասերի վրա, կողոպտելով և սպանելով, գեղեցիկ կանանց ու երեխաներին գերեվարելով և

վաճառքի հանելով որպես հարձեր և ստրուկներ՝ իրենց կողմից զավթված Իրաքյան և Սիրիական տարածքներում: Ստիպելով քրիստոնյաներին կրոնափոխ դառնալ կամ գլխահարկ վճարել ու սրահատման սպառնալիքով լքել իրենց տներն ու կալվածները, որտեղ ապրել էին տասնամյակներ կամ... դարեր շարունակ: Տեր Առաքելին հաջողվել էր Մուսուլի վրա ԴԱՀԵՇական բորենիների հարձակվելուց մի քանի ժամ առաջ 65 հայ ընտանիքներին անվտանգ հեռացնել քաղաքից ու տեղավորել Էրբիլի, Դիոկի, Չախոյի, Ավգրուկի, Հավրեզի հայոց տներում, եկեղեցիներում:

Մի քանի օր առաջ, արևմտյան պետությունների անտարբեր աչքերի և ցինիկ վերաբերմունքից քաջալերվելով, մանավանդ որ նրանք մասնակցել էին Ա.Ս.Ն.ի ու ՆԱԹՕի կողմից Իրաքի զավթմանն ու թալանմանը, իբր թե զանգվածային ոչնչացման զենքեր “ման գալով” ու կախաղան բարձրացնելով Սադդամ Հյուսեյնին (ինչպես ԱՄՆ արտաքին գործերի նախկին նախարարուհի Հիլարի Գլինտոնի “խոստովանությունները” վկայում են ԴԱՀԵՇի բացարձակ օժանդակման մասին) այս անգամ Բաղդադի նոր “խալիֆա”ի գործերը հարձակվեցին քրիստոնեական մեծագույն ավան, Ղարադոշի և շրջակա գյուղերի վրա, ինչպես «Աղաջանյան»ի, միաժամանակ՝ ուղղակի ցեղասպանություն գործադրելով հայ ժողովրդի բարեկամ ու դաշնակից եզիդիների վրա, որոնք 1918թ.ին, Չահանկիր Աղայի գլխավորությամբ մասնակցել էին Սարդարապատի ճակատամարտին...: Դարձյալ հազարավոր գաղթական-փախստականներ, Էրբիլի քրիստոնեական քաղաք Անկավայում, ուր եկեղեցիներն ու վանքերը, դպրոցները, տրամադրվել էին ամեն ինչ կորցրած հայ, ասորի, քաղդեացի, եզիդի, թուրքմեն, Իրաքի և Քուրդստանի քաղաքայինների:

Ի վերջո, վախենալով թե իրենց կենսական շահերը Հյուսիսային Իրաքում կարող են վտանգվել իսլամական ծայրահեղականների կողմից, մանավանդ որ մարդկային ողբերգության մանրամասները տարածվել էին զանգվածային լրատվամիջոցներով, շարժելով “քրիստոնյա” դեկավարների “գուլթը”, ԱՄՆի ռազմական ինքնաթիռները մի քանի օդային ռմբահարումներով փորձում են հավասարակշռել իրավիճակը, ոչ մեկ հստակ ծրագիրներով, թե ի՞նչ է լինելու բյուրավոր գաղթականների ապագան, և ո՞վ է ջախջախելու մինչև ատամները գինված, Արևմուտքի գաղտնի օգնություններով և նաֆթի անհատնում եկամուտներով “սնուցվող” այս մարդակերպ գազանները:

“Մենք ձեզնից խնդրում ենք որ կապվեք Հայաստանի կառավարության հետ, որպեսզի կազմակերպի Մուսուլից 65 հայ փախստական ընտանիքների վերադարձը և մշտական բնակությունը Մայր Հայրենիքում”, - անցած գիշեր Էրբիլից հեռախոսով հայտնեց մեր ժամանակների “Ղևոնդ Երեց” Տեր Առաքել Գասբարյանը:

Հույսով ենք որ արդեն իսկ ձեռնարկված անհրաժեշտ քայլերն ու կապերը, ի վերջո Իրաքյան նորագույն դժոխքից կփրկի նաև մեր հարազատ եղբայրներին ու քույրերին, որոնք այսօր, հակառակ Իրաքի Հայոց հոգևոր Առաջնորդ Ավագ Սրբազանին, Իրաքյան Քուրդստանի հազար կարիքի մեջ գտնվող պետության օժանդակության, իրենց նոր կյանքը կստեղծեն Մայրենի հողում:

